ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ակնաշեն, (098) 579710 (093) 979710, aknashen.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
11 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2018թ N 50 Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ակնաշեն համայնքի բնակիչ՝ 25.03.1964թ. ծնված Մարգար Գեվորգի Գեվորգյանը դիմել է Ակնաշենի համայնքապետարան համայնքի Բաղրամյան փողոց թիվ 44 հասցեում գտնվող, իրեն սեփ.իրավունքով պատկանող 0.161հա հողամասի վրա 1954թ. կառուցված բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով: Հաշվի առնելով, որ բնակելի տունը և օժանդակ շենք-շինությունները կառուցվել են մինչև 15.05.2001թվականը, հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում.

Ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության վարչական տարածքներում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ

1.Վերականգնել Արմավիրի մարզի Ակնաշեն համայնքի Բաղրամյան փողոցի թիվ 44 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Մարգար Գեվորգի Գեվորգյանի /ծնված 25.03.1964թ./ գույքային իրավունքները, ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.161հա հողամասի վրա կառուցված օրինական բնակելի տան և օրինական բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ՝ (բնակելի տուն 84.2ք/մ կառուցված 1954թ .բաց պատշգամբ 36.6ք/մ կառուցված 1980թ, մառան 9.2ք/մ կառուցված 1980թ., Լոգարան 4.5ք/մ կառուցված 1980թ., զուգարան 2.5ք/մ կառուցված 1980թ., անասնաշենք 83.8ք/մ կառուցված 1980թ., օժանդակ շինություն 1.5 ք/մ կառուցված 1980թ., Կառույցները չեն հակասում քաղաքաշինության նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:

2.Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:

3.Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ մարզերի միավորված ստորաբաժանմանը գրանցել Մարգար Գեվորգի Գեվորգյանի սեփականության իրավունքը սույն որոշման առաջին կետում նշված տնամերձ հողամասի վրա առկա բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայական:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԻՍԱԿ ՄԻՍԱԿՅԱՆ

2018 թ. սեպտեմբեր 11
գ.Ակնաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ակնաշեն, (098) 579710 (093) 979710, aknashen.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 սեպտեմբերի 2018 թվականի N51 Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնաշեն համայնքի ավագանու 2006 թվականի հունիսի 27-ի թիվ 5 նիստի թիվ 2 որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ակնաշեն համայնքի՝ 004-005-048-001 ծածկագրի տնամերձ հողամասին տրամադրել հասցե՝ Կ.Դեմիրճյան փողոց տուն 2 :

2. Սույն որոշման մեկ օրինակը պետական գրանցման համար ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանմանը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԻՍԱԿ ՄԻՍԱԿՅԱՆ**

2018 թ. սեպտեմբեր 15
գ.Ակնաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱԿՆԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

Թիվ 49Ա

< 11 >սեպտեմբեր 2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՄԱՐԳԱՐ ԳԵՎՈՐԳԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարգար Գևորգյանի դիմումը և ղեկավարվելով «Ինքնակամ կառուցված շենքերի,շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին » 2002 թվականի 25 դեկտեմբերի Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով,նկատի ունենալով այդ հանգամանքը,որ Մարգար Գևորգյանի ընտանիքին հատկացված հողամասի կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակության օգտագործողների համար,այն ընդգրկված չէ «ՀՀ հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, չի ընդգրկված ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության,ինչպես նաև հնագիտական պատմամշակութային հողերի պահպանման գոտիներում,չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, առաջացնում սերվիտուտ

Որոշում եմ

1.Ճանաչել Մարգար Գևորգի Գևորգյանի սեփականության իրավունքը ըստ կադաստրային քարտեզագրման արդյունքների 0039-0008 կադաստրային ծածկագրով փաստացի օգտագործվող 0,161 մակերեսով տնամերձ հողամասի նկատմամբ, որը փաստացի նրանց կողմից օգտագործվել է նաև մինչ 2001 թվականի մայիսի 15-ը:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Համայնքապետ Մ.Միսակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 05 » Սեպտեմբեր 2018 թ. թիվ 48 -Ա

ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնաշեն համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 50 Ն որոշումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնաշեն համայնքի 2018 թվականի բյուջեում կատարել վերաբաշխում տնտեսագիտական դասակարգման հոդվածների միջև :

1/Վարչական բյուջեի 01 1 1 -ի 4269 հոդվածից 300.0/երեք հարյուր / հազար դրամ հատկացնել 01 1 1 –ի 4237 հոդվածին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ակնաշենի համայնքապետ ---------- Մ.Միսակյան

« 05»Սեպտեմբեր 2018 թվական
գ. Ակնաշեն Ժամը՝ 12^{00}